

Հ. ԱՆՈՒՅԱՆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք Թ

68. Ե ԳԻՐԻՑ ՀԱՅԵՐԵՆ ՉԵՒԱԿԻՐ

1894—5 թ., երբ ուսուցիչ էի Կարնո Սանասարյան վարժարանում, ձեռնարկեցի կազմել նույն դպրոցի հայերեն ձեռագրերի ցուցակը: Յուցակը տպվեց նախ Վանդիս Ամսորեայ ձեռագրում և ապա առանձին գրքով հրատարակվեց Վիեննա 1900 թ. № 1 ձեռագիրը 986 թ. գրված Ավետարան է: Այս Ավետարանի մեջ կային հայտնապես մի քանի կրկնագիր թերթեր, այն է՝ 2—15 և 328—329: Այդ կրկնագիր մասերը երևան հանելուց հետո պարզվեց, որ Յովհաննու Ավետարանից մի մաս էր (ԺԷ, 28) — Եւ ածին զՅիսուս ի վանացն Կայիափայ ևն և նույնպես Պողոսի առ Կողոսացիս թղթից գլուխ Ա, գլուխ Գ, որ ավելորդ ևմ համարում այստեղ առաջ բերել:

Նորատիպ «Յիշատակարանք Ձեռագրաց» աշխատության մեջ, որ հրատարակեց Սուրբ Գարեգին Ա կաթողիկոսը 1951 թ. Անթիլիաս, էջ 150, խոսելով այս ձեռագրի մասին, հայտնում է, թե Կրկնագիր լինելով, աւելի հին է քան ՆԼԵ (=986) թուականը:

Այս համոզմամբ, բայց արժեքավոր նկատողությունը առիթ է տալիս մեզ ավելի խոր մտածություն:

Ճշմարիտ է, որ կրկնագրի տակը գրված բնագիրը ավելի հին է, քան վերերևը: Եթե 986 թ. գրված բնագիրը մինչև այժմ (մոտ 1000 տարի) գիմացել է և հասել է մեզ անվթար, այն էլ տառակապակց ավերումներից և, մանավանդ, 1915 թվականի բնդհանուր հայկական կոտորածից հետո, ինչպես մտածել, թե տակի գրությունը գոնե 500 տարի ավելի հին շրիներ, մանավանդ, որ Ե դարից մինչև Ժ դարը թուրքական ավերածություններ չկային դեռ:

Այս մտածմունքով մենք ահա հասնում ենք Ե դարին: Լինում են դեպքեր, երբ կրկնագիրը քիչ ժամանակ միայն ավելի հին է, քան բնագիրը: Հայտնի է, որ Կիկերոնը գանգատվում է այն մասին, թե ոմանք իր ճառերը մագաղաթի վրայից քերելով՝ ուրիշ նոր բան են գրում: Ուրիշն եթե մի հեղինակի կենդանության ժամանակ դեպքեր էին լինում մագաղաթը քերելու, ինչու չմտածել, թե շուրջ 100 տարի հետո մի գրիչ որևէ մագաղաթ ձեռք բերած լիներ և քերելով՝ նոր բնագիր արտագրած լիներ:

Սակայն այս առարկությունը գոնե այս դեպքում ճիշտ չէ, որովհետև և՛ Ե թև այդ գրիչները մագաղաթը քերում և նորից էին գրում, այդ նոր գրությունը տարբեր բնագիր էր լինում և ոչ թե միևնույնը: Մեր բնած 986 թ. ձեռագիրը Ավետարան է, և տակի գրությունն էլ Ավետարան է:

Ինքնին հասկանալի է, որ այդ հին Ավետարանը այնքան հին էր, որ այլևս անգործածելի դառնալով, պետք էր քերել և մաշված ու անընթեռնելի դարձած տողերի վրա նորից Ավետարան գրել:

Քրիմիական միջոցներ այժմ շատ կան քերված բնագրերը երևան հանելու համար: Հրավիրում եմ մեր երիտասարդ փիմիկոսներին այդ միջոցներով երևան հանել մեր Յ դարի այդ ամենահին ձեռագիրը, որ պեսզի տեսնենք, թե ինչ հնագրական արժեք է ներկայացնում:

Ձեռագրի ցուցակը կազմելուց 58 տարի հետո նորից գնացի և տեսա այդ ձեռագիրը, որ բարերախտարար փրկվելով տաճկական աշխարհավեր սպանդից, շնորհիվ սովետական իշխանության փոխադրվել է այժմ մեր Մատենադարանը: Կարևոր կետը այն է, թե հինգերորդ դարի այդ ձեռագրի երկաթագիրը ո՞ր տեսակին է պատկանում:

Հայտնի է, որ մենք ունենք երկու տեսակ երկաթագիր: Առաջինը կոչվում է բուն Մեսրոպյան կամ գլխագիր երկաթագիր, իսկ երկրորդը կոչվում է Միջին Մեսրոպյան երկաթագիր: Այս երկուսի տարբերությունն այն է, որ առաջինի մեջ տառերը կլորածև են, իսկ երկրորդի մեջ՝ անկյունավոր և թեքվում են դեպի քառակուսի ձևը: Տաշյանը իր Ակնարկի մեջ հնագույնը համարում է գլխագիր երկաթագիրը, բայց իր ուրույն մեջ՝ վճռական չէ: Իմ «Հայոց գրերը» աշխատության մեջ (Վիեննա, 1928) էջ 387—396 կարծեմ թե կարողացել եմ ապացուցել, որ հնագույնը գլխագիր երկաթագիրն է:

Մեր խնդրանքով, պատմական գիտությունների թեկնածու Բնկ. Կ. Ղաֆուդարյանը հետևյալ ծանոթությունը տվեց այդ ձեռագրի մասին:

«Մատենադարանի 966 թվականին գրված № 7735 ձեռագիր ավետարանը (Սանասարյան վարժարանի № 1 ձեռագիրը) սկզբնապես ոչ մի զարդանկար չի ունեցել, դրա համար էլ բոլոր չորս ավետարաններն էլ սկզբվում են պարզ գրությունով, ըստ որում վերնագրերը ուղղաձիգ երկաթագիր են, իսկ տեքստը՝ միապաղաղ ընդհանրապես երկաթագիր, որ լիապես համապատասխանում է 10-րդ դարի գրչության ոճին:

Սակայն հետագայում, հավանաբար 11-րդ դարի առաջին կեսին, ավետարանի սկզբին ավելացրել են 7 թերթ մագաղաթ, որոնց վրա գրել են Եփեսերիոս Կարպիանոսի թուղթը (4—5 էջ) և ավետարանի տասը կանոնները (5—13 էջեր), բոլորն էլ խիստ պրիմիտիվ խորաններով զարդարած և կարմիր, կապույտ, դեղին ու կանաչ գույներով ներկած: Այդ նավելված թերթերը խիստ կերպով տարբերվում են բուն ավետարանի մագաղաթից թե՛ որակով և թե՛ այն բանով, որ նրանք պոկված են մի հին ավելի մեծ չափսի ձեռագրի ավետարանից և վրայի գրվածքը մաքրելով կրկին անգամ օգտագործել են Կարպիանոսի նամակի և կանոնների համար: Մեր ասածը ապացուցվում է նաև այն բանով, որ նման մի թերթ էլ օգտագործված է ավետարանի մեջ, գործածություն ժամանակ, ձեռագրի միջից ընկած թերթի տեղում, որն այժմ համարակալված է 328 և 329 էջերի տակ: Ուշագրավն այն է, որ այդ թերթն՝ ավելացնողը ձեռագրի մի շարք էջերում (330—348) ուժեղացրել է իր մուգ գույնի մղանով՝ պունաթափ բնագիրը: Այդ թերթի վերին գիծն ըստ գրչության ոճի պատկանում է 11-րդ դարի առաջին կեսերին, ռուսի բնական կլիներ նաև ձեռագրի սկզբի կանոնների թերթը ևս հայտարարել 11-րդ դարի առաջին կեսի գործ, իսկ

տակի հին գրչությունը, որ դարձյալ բոլորածև հին երկաթագիր է՝ ավելի հին:

Սակայն կանոնների հյուսածո զարգարանքների ոճական քննությունը պույց է տալիս, որ հին ձեռագրի այդ թերթերը կտրատել, գրությունը ջնջել և նկարագարել են 9-րդ դարի վերջերին կամ 10-րդ դարում, երբ մանրանկարչությունն իր համար առանձին ոճ դեռևս չէր կարողացել ստեղծել, այլ ամենուրեք, ինչպես մանրանկարչության, նույնպես էլ գեղարվեստական կերամիկայի մեջ օգտագործվում էր, այսպես կոչված, ճարտարապետական օրնամենտը և ոչ թե 11-րդ դարում, երբ արդեն մշակվել էր մանրանկարչական առանձին ոճ:

Այս կարևոր հանգամանքը նկատի առնելով, պետք է եզրակացնենք, որ Մատենադարանի 966 թվականի ավետարանը 11-րդ դարի առաջին կեսերին վերանորոգելու ժամանակ մի այլ հին ձեռագրի մեջ 9-րդ դարում օգտագործված 7 կրկնագիր թերթերը պոկել և միացրել են նրան, որին իր չափերով քիչ տարբերությամբ հավասար է եղել քննարկվող ձեռագիրը: Այս եզրակացությունը ավելի հավանական է դառնում, երբ նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ այդ թերթերի չափսը ձեռագրի մյուս թերթերի չափսից մի քիչ տարբեր է:

Այստեղ հարց է առաջ գալիս, թե այս դեպքում ինչպես բացատրել 328—329 էջերի թերթի նորոգությունը 11-րդ դարում նույն հին ձեռագրի մագաղաթյա թերթով:

Ձեռագիրն այժմ պահպանակ չունի, հավանաբար այդ թերթը սկզբում նույն ձեռագրում օգտագործված է եղել իրրև պահպանակ, իսկ հետո նրա հին գրությունը ջնջել և օգտագործել են բնկած թերթի տեղում. ձեռքի տակ մագաղաթյա ազատ թերթ չունենալու պատճառով:

Այս տեսակետով պրոֆեսոր Հր. Աճառյանի ենթադրությունը ստանում է մեծ կարևորություն, որովհետև, եթե իրոք 9-րդ դարում մագաղաթյա մի ձեռագիր մատյան արդեն այնքան էր հնացել, որ նրա թերթերը պոկոտում էին փոքրացնելու և այլ մատյանների մեջ իրրև պահպանակ օգտագործելու նպատակով, ապա այդ հին ձեռագիրը պատկանելու էր հայոց գրերի սկզբնական շրջանին, հավանաբար 5-րդ դարին:

Մինչ այժմ մեզ ձեռնոթ էին Դվինի 6-րդ դարի վիմական արձանագրությունները, իսկ ձեռագիր մատյանների 9-րդ դարից ավելի հին գրչության օրինակները մեզ համար անճանաչելի էին, բացի մի քանի կրկնագրերից, որոնք գեռևս ուսումնասիրված չեն, ուստի այստեղ քննվող ձեռագրի կրկնագիր թերթերի ստորին գրությանը անվրեպ հայոց գրչության սկզբնական շրջանին պատկանելը ունի խիստ մեծ կարևորություն հայկական գրերի պատմության համար:

### 69. Թ Ո Յ Ն

Այս բառի ստուգարանությունը հայտնի չէ: Երևք մանր ստուգարանություններ (երեքն էլ անընդունելի) տևս իմ Արմ. բու. հտ. Բ, էջ 1270:

Անշուշտ պետք է կապել «սպանել» գաղափարի նետ. Եզնիկ, էջ 63 ասում է.

Չինչ չար քան զօձ կայցէ, և ի նմանէ թերթակէ. և ի սպանող դեղոց

(=թոյն), որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, զի հասուցեալ և անդէն բուժէ:

Նաև պրս. Zahr «թույն», որ մեկնվում է դնդ. *γάρτα*-. սանս. \*hatra- «սպանիչ» բառերով (Horn § 678):

«Սպանել» գաղափարի համար հունարենում ունենք *Θείνω*, որ թեև Bailly-ի մեծ բառարանում մեկնված է «զարնել, խփել», բայց օրինակների մեջ ունենք սուերով կոկորդը ծակել են», որով հասնում ենք սպանելու գաղափարին: Boisacq թեև նույնպես *Θείνω* բառի տակ (էջ 336) նշանակում է «զարնել», բայց էջ 1033 *Φόνος* բառի տակ նշանակում է «հիշա *Θείνω* *αὐ-εἶ*, սպանել»:

*Θείνω* հույն բառը գրեթե ճշտիվ ծածկում է հյ. րոյն բառը:

Երբ երկու ցեղակից լեզուների մեջ ձևով և իմաստով նման բառեր գտնվեն, նմանությունը կարող ենք բացատրել երկու ձևով. 1. այդ երկուսը ցեղակից են և բխում են միևնույն արմատից. 2. մեկը փոխառյալ է մյուսից: Հայերեն և հունարեն բառերի նմանությունը բացատրելու համար վերի առաջին դեպքում պետք է դիմենք հնդեվրոպական հիմնալեզվին: Վերի հույն բառի նախածին է հիմնալեզվի մեջ *g<sup>2</sup>hen* «զարնել, ծեծել» արմատը, որից բխում է նաև հյ. գանել «ծեծել», ռուս. *гонить* «քշել, հալածել» և այլն: Այս դեպքում հունարեն *Θείνω* կապ չունի հյ. րոյն բառի հետ, որովհետև նույն արմատից բխող համապատասխան բառն է հայերեն գան: Առաջին կետի ներքումով մնում է ընդունել քրիստոսի կետը, այսինքն՝ թե րոյն փոխառյալ է հունարեն *Θείνω* ձևից, բայց հունարեն *Θείνω* էլ լրիվ չի ծածկում ոչ հայերեն րոյն բառը, որովհետև մեկը ունի ռ. երկրորդադար, իսկ մյուսը ոչ երկրորդադար. մյուս կողմից հայերենի «րոյն» իմաստը չկա հունարենում: Այսպիսով հայերեն րոյն բառը հունարենից փոխառյալ չէ և մեր վերի երկու կետերը ջուրն ընկան:

Հունարեն *Θείνω* բառի հետ համընթաց է *Θαύατος* «մահ», որ ըստ Boisacq էջ 333, բնավ կապ չունի *Θείνω* «սպանել» արմատի հետ, ուստի կապ չունի նաև մեր րոյն բառի հետ: Մնում է գտնել մի ուրիշ հարմար բառ:

Հարմարագույն բառն է *κτείνω* «սպանել», որի հետ նույն է *κτόνος* «սպանություն»: Boisacq, էջ 24 նախաձեռն գնում է *q<sup>2</sup>hen*. նույնը Walde - Pokorny 1. 505. հնդեվրոպական հիմնալեզվի մեջ *q<sup>2</sup>* ձայնի գոյությունը խախտ է (Brugmann, Abrege. 216): Այս ձայնով հայերենի մեջ ունենք միայն ցին «թռչունի անունը» = հուն. *κτείνος* (տես Արմ. թ. 2. 1065):

Այժմ հնյս. *kten* արմատի դեմ գնելով հայերեն րոյն, կունենանք մի նոր, ավելի պայծառ օրինակ: Արդարև բառասկզբի *kt* ձայնախմբի մեջ *k* ընկնելով, մնում է միայն *t*, որ տալիս է հայերեն միշտ *ր*. երկրորդադար հնյս. *eu* և *ou* տալով հյ. ոյ, հայերեն րոյն բառի նախաձեռն գտնում է *kteun* կամ *ktoun*: Ավելացնենք նաև, որ հայերենի մեջ ունենք դարձյալ րիւն ձևը, որ նշանակում է «թույն»: Ըստ այսմ կարելի է երկրորդադար տալ մի ուրիշ ձև:

#### 70. Ա Ն Տ Ա Ռ

Այս բառը չի մեկնված. գանազան հեղինակներ ուզում են կապել հյ. *dau* = *doru* բառի հետ, բայց այդ բոլոր փորձերը անհաջող են անցել: Տես Արմ. թ. անտառ բառի տակ:

Ամենահարմար բառը, որի հետ կարելի է կապել, հուն. *δενόρογ* ձևն է, որ նշանակում է *ս1. ծառ, 2. անտառ*:

Հուն. բառի ծագումը անորոշ է: Ամենալավն է Bailly, էջ 444, որ համարում է բառի ծագումը անհայտ (*origine inconnue*): Boisacq 176 և Walde—Pokorny I, 804 տալիս են զանազան մեկնարանություններ, մերթ համարում են կրկնադոր, մերթ արագարանություն (haplologie) արդյունք, մերթ էլ կապում են հնիս. *g<sup>2</sup>end* արմատի հետ: Այս բոլորը իրար են հերքում:

Կարծում եմ լավագույնն է կապել հյ. անտառ բառի հետ և բաժանել բոլոր ուրիշ նման արմատներից: Հունարեն *δενόρογ* և հյ. անտառ բառերի մեջ բոլոր բաղաձայները նույն են: Երկուսի մեջ էլ ունենք *π, δ, γ*, միայն հունարենի մեջ *δ* երկու անգամ է: Պետք է կարծել, որ երկրորդ անգամի *δ* թարմատար հավելված է *π δ γ* բաղաձայների միջև, ինչպես սովորական է շատ լեզուներում, օր.<sup>՝</sup> հյ. ծանդր, մանդր, ֆր. *cendre* (սմոխիք > լատ. *cener*), այսպես և հուն. *ἀνθρ* սողամարդ, սեռ. *ανθρως*, նույնիսկ թրք. *tandər* = թոնիր, *penir* > *pendir*: Այսպիսով բառի նախնական ձևը կլինի \* *δένρογ*, կ'ընջվի երկրորդ *δ* ձայնը և հայերենի հետ բոլորովին կնույնանա:

Մնում է միայն ձայների տարբեր շարքը, որ կարելի մեկնել տեղափոխությունը, մանավանդ որ *δ, γ, π* ձայները ընդունակ են տեղափոխություն, օր.<sup>՝</sup> արագիլ = *πελαργός*, արտասուք = *ὄακρον*, խստոր = *σκόροζον* (սլրաս. *hudere*) ևն:

Եթե անտառ բառը այսպիսով կապվեց հուն. *δενόρογ* բառի հետ, մեկով ավելացավ թիվը այն հայ բառերի, որոնք միայն հունարենում ունեն իրենց համապատասխանը, այսպես՝ արագիլ, խստոր, աղմուկ = *πολύμογ*, թարփ = *ταρπότη*, կարիճ = *καρτσός*, սրինգ = *σῦργξ*:

#### 71. 23. -US ՄԱՍՆԻԿԸ

Հայերենի մեջ կան մի խումբ բառեր, որոնք կազմված են ուստ մասնիկով. այսպես՝ թաքուստ, գալուստ, ելուստ, փախուստ, պահուստ, հարուստ, կորուստ, որկորուստ, ապրուստ, հագուստ, կապուստ: Այս բառերից մեծ մասը հասած են մեզ հնից, իսկ միմիայն երկուսը (հագուստ, կապուստ) նոր են կազմված. այս բառերի հիմնական իմաստն է ինչ որ գործողություն կատարումը. օր.<sup>՝</sup> գալուստ նշ. սգալը, գալու գործողությունը, փախուստ փախչելը, փախչելու գործողությունը և այլն:

Ուրեմն այս մասնիկը ձևով և նշանակությամբ նույննում է ուստ. -ОУСЬ մասնիկի հետ, որով նույնպես կազմվում են շատ բազմաթիվ բառեր. օր.<sup>՝</sup> МУДРОСТЬ սիմաստություն, НОВОСТЬ սնորություն, ХРАБРОСТЬ սրաջութություն, ХИТРОСТЬ սխորամանկություն (այս կարգի բառերի թիվը ընկ. Ռաֆիկ Մելիքոնյանի հաշիվով 2500 հատ է):

Ռուս. -ОУСЬ ձևը առաջանում է հսլ. ОУСЬ ձևից և ենթադրում է հնիս. *osti*. հյ. -ստ առաջանում է հնիս. *st* խմբից, ինչպես՝ զգեստ < հնիս. *vesti*, որով հյ. և հսլ. ձևերը միանում են իրար հետ. (հյ. ու նախաձայնի մասին կիսոսենք քիչ հետո):

Հայերենի մեջ բացի այս -ուտ մասնիկից, ունենք մի քանի բառեր էլ, որոնք կազմված են -եստ, -աստ և -իստ մասնիկներիով: Այսպես՝

-եստ մասնիկով են գովեստ, ուտեստ, համեստ, պահեստ և թերևս արուեստ, որ դարձել է հետո արհեստ:

-աստ մասնիկով են առագաստ, զգաստ, իմաստ, ուրաստ, հաւաստ (վերջինը սլաճված է հաւաստի և հաւաստիք բառերի մեջ):

-իստ մասնիկով ունենք միայն հաճախ:

Ի՞նչ են արդյոք այս -ստ ձայնախմբից առաջ գտնված ե, ի, ա, ու ձայնափորները. արդյոք հնգեփրոսպական ձայնագարձի աստիճաններն են ներկայացնում. այդ դեպքում ինչու է պակասում ո, որ նույն ձայնագարձի միջին կարևոր աստիճանն է: Երկրորդ՝ եթե հյ. ու համարենք հնխ. Օ աստիճանից, ապա Օ պիտի տան սլափոնականում ձ և ոչ Օ: Ավելի լավ է, ուրեմն, ենթադրել, թե հայերենի այս ե, ի, ա, ու ձայնափորները ներկայացնում են հայերեն բայական չորս յծորդությունների բները (սիրելի, խօսելի, աղալի, թողուլի):

Այսպես՝ զգալ-զգաստ, իմանալ-իմաստ, ուրանալ-ուրաստ, հանգչիլ-հանգիստ, գովել-գովեստ, ուտել-ուտեստ, կորուսանել-կորուստ և այլն:

Ճիշտ է, որ մեր բոլոր վերև հիշած բառերը չենք կարող այսպես դասավորել, բայց բառակազմության համար այդ ոչ մի նշանակություն չունի, որովհետև որոշ բառեր արդեն հետին կազմություն լինելով՝ բնի դասավորը ջնջված էր ժողովրդի գիտակցության մեջ: Այսպես է հազուստ, որ հնից չէ ավանդված (հինն է ազանիմ), որի օրինակով էլ կազմվել է կապուստ, ասում ենք իրար հետ միասին հազուստ-կապուստ (և ոչ թե կապեստ):

Վերև ասացինք, թե այս մասնիկով կազմված բառերի նշանակությունն է գործողության կատարում. բայց դա նշանակություն առաջին աստիճանն է, որ և նույնանում է սլափոնականի հետ: Բայց գործողությունը հասնում է ապա արդյունքի, դրա համար էլ վերի բառերից մի քանիսը նշանակում են նախ գործողություն, ապա արդյունք: Օրինակ՝ գովեստ 1. գովելու գործողությունը, գովարանություն, 2. գովասանական, պահեստ 1. պահելու գործողությունը, պահպանություն, 2. պահած բանը, մթերք, Ելուստ 1. ելնելու գործողությունը, 2. ուսուցք, ալքուստ 1. ալքելը, 2. ալքելու միջոցներ, ուտելիզենք, հաճախ 1. հանգրստություն, 2. դադար:

Նույնիսկ երբեմն այդ երկու նշանակությունները այնպես են միանում իրար հետ, որ կարելի չէ լինում զանազանել, թե որ իմաստով սկզբ է առնել. օր.՝ իմաստ, որ թե «նշանակությունն» է և թե նշանակած բանը:

Գան էլ, որ միայն երկրորդ իմաստով են, ինչպես է հագուստ:

Երկրորդ իմաստին հասնելուց հետո բառը կարող է դառնալ ածական, ինչպես է զգաստ, որ այժմ չի նշանակում զգացողություն, այլ զգացող համեստ (նախկին համ անձանոթ արմատից), հաճախ (որից մինչև անգամ նավահանգիստ), հարուստ (նախապես նշանակում էր շատ, երկարատև, բունակալ, իսկ այժմ մեծատուն, բնչավետ):

Առանձին ուղադրություն արժանի են հետևյալ բառերը.

Առագաստ, որ նշանակում է թե նավի առագաստը և թե հարսանեկան սենյակի Մագումբ անորոշ է, որովհետև կարող է պատկանել թե ազանիմ «հագնել» արմատին և թե ազանիմ «իջևանել» արմատին: Առաջինից է

թերևս նալի առագաստ իմաստով, իսկ երկրորդից է հարսի սենյակ իմաստով: Իմ Արմ. բառարանում երկուսն էլ դրել եմ առաջին արմատից:

Որկորուստ թորկրամոլ» նշանակությամբ. գործածված է հետին հեղինակների մոտ. երկու անգամ ունենք որկորստութիւն թորկրամոլութուն» ձևով Ս. Գրքում (Գ. Մակ. 2. 26, Առակ. ԻԸ. 7), և մի անգամ Եւագր: Մինչև այստեղ հիշված օրինակները ծագում են բայական արմատներից, ուստի զարմանալի է որկորուստ ձևը, որ ծագում է որկոր գոյականից: Նույնիսկ կապուստ պետք է համարել կապե բայից, ինչպես որ հարուստ՝ հարուլ բայից և հաւաստիք՝ հաւատալ կամ հաւանիլ բայից:

Մի կարևոր հանգամանք էլ կա, որ արժանի է առանձին հիշատակության: Այս բառերի մեծ մասը հետևում են ի հոլովման, բայց ամենահին ձևերից մի քանիսը սեռականում լինում են -եան ինչ. գալուստ—գալըստեան, փախուստ—փախուստեան, թաքուստ—թաքստեան, հանդիստ—հանգըստեան, կորուստ—կորստեան, նույնիսկ ելուստ—ելստեան և որկորուստ—որկորստեան:

Ի՞նչ է այս և ձայնավորի ծագումը: -Իւն. թիւն վերջավորած բառերը սեռականում ստանում են -եան, -քեան ձևերը, բայց վերոհիշյալ բառերը բացառութուն կազմելով հետևում են նույն հոլովման. կարծում եմ, թե այս և ձայնավորի հավելումը հնիս. OSTI մասնիկի վերջաձայն i-ի փոփոխություն է:

Այս ուստ մասնիկի հետ մնականարար ոչ մի կապ չունի այն -ուստ մասնիկը, որ կազմում է մակրայ՝ «մի տեղից» նշանակությամբ, ինչպես երկնուստ, արտաքուստ, ի ներքուստ, ի վերուստ, ի հեռուստ և այլն:

72. Խ Է Չ

Միջին հայերեն բառ է սկողքին, քովը» նշանակությամբ. գործածված է հետևյալ տեղերում. Անսիգք 81. Սմբ. գատ 120. Վստկ. 79, 208 (Եւ թէ զկանեփի կանաչ ցախն ի խէչդ պահես, մնջեխ ի քեզ շմերձենայ. Երբ խէչ տոշ բերանին). Քուչ. 83 (Այն մարդուն ի խէչ մի նստիր): Այս բառից է կազմված խեչավառ «խեցգետին», իր երկու կողքի չորս գույգ թևերի պատճառով այսպես կոչված: Այս վկայութունները տանում են մեզ մինչև ԺԲ դար. բառը այսօր էլ գործածական է մեր զանազան բարբառներում նույն նշանակությամբ. Տես Արմ. բո. հա. Գ. 475:

Համեմատում եմ ընդհանուր թրք. քձ զձԵ բառի հետ, որ նշանակում է «հետույք, ետև, զավակ» (Արիկեան ընդ. բո. տճկ.—հյ: Պսլիս 1898, 466, Չէքի 1912, 647): Будагов ունի II էջ 39 «մի բանի հետևի կողմը, ծունկից մինչև կոճը եղած մասը: Գործածական է պոլսահայ բարբառում խըշ ձևով և նշանակում է ազգրի վերևի մասը դեպի հետևի կողմը: Ասվում է հատկապես խըշս կցովի: Նալի համար էլ գործածվում է խըշ՝ նշանակելու համար նալի հետևի մասը, խեչք. օր.՝ նալին խըշը նստած է:

Թաթարական ազդեցության ժամանակ խէչ բառը փոխ է առնվել նրանց լեզվից սկողք, քով» նշանակությամբ, ճիշտ ինչպես ունենք գրքատու երի քքովը, կողքը», որ կազմված է երի բառից «անասունի աջ ոտքը ուսով միասին». Գաղմատիա է յարևելից Գաղղիոյ, առ երի Գերմանիոյ խոր. (=Շիր.) Աշխ.: Այսպես նաև առընթեր սկողքին», որ կազմված է րեք բառից:

## 73. Է Վ Ե Ր Ե Կ

Կեսարիա քաղաքի հարավ-արևելյան կողմում, 5 ժամ հեռավորությամբ, Կիլիկիայի սահմանի վրա գտնվում է այս գյուղը, որ թրք. կոչվում է Everek: Գյուղը ամբողջ հայաբնակ էր և ուներ 1000 տուն, որ է՝ 5000 շունչ: Կարծում եմ, որ այս բառը ծագում է հայերեն ավերակ բառից: Եթե ամբողջ գյուղը հայաբնակ էր և հայ բնակիչները ավերակ անունն են տվել այդ գյուղին, ուրեմն հին մի քաղաքի ավերակն էր ներկայացնում: Թե որն էր այդ հին քաղաքը (թերես հիտիտական) մեր նպատակից դուրս է որոշել: Մենք միայն ցույց ենք տալիս, որ թրք. Everek բառը ծագում է հյ. ավերակ ձևից: Այս բառի մեջ շեշտը գրված էր միջին վանկի վրա: Թուրքերենի մեջ սովորական ձայնավորների ներգաշնակության համաձայն պետք էր երեք ձայնավորներն էլ նույն լինելին, կամ 3 a, կամ 3 e (avarak կամ everek): Որովհետև միջին է շեշտված է, ուստի Ե հաղթող հանդիսանալով, ավերակ-ը դարձել է everek:

Ճիշտ այսպես է նաև Severek քաղաքը, որ գտնվում է Տիգրանակերտի մոտ և ծագում է անշուշտ հյ. Սև-ավերակ ձևից:

## 74. Թ Ր Ք. D A N G A L A Q

Будагов-ի բառարանում, էջ 500 այս բառը գրվում է دانقل و دانقلو ձևերով և բացատրված է „Зѣвка праздноватаящійся“ Hindoglou, Արիկեան բառարանում (Պոլիս 1892), էջ 250 գրված է دانقلو և բացատրված է 1. շինական, 2. անհոգ, պղերգ, իսկ Զեքիի բառարանում (Պոլիս 1912) էջ 340 գրված է նույնպես دانقلو և միկնված է 1. գեղջուկ, ամարդի, 2. անհոգ: Այժմ Պոլսի թուրքերենով ճնշվում է dangalax և նշանակում է քախմար, բխամիտ: Նույնը փոխ են առել Պոլսի հայերը նույն իմաստով և ճնշում են դանդալախ (dangalax):

Կարծում եմ, թե այս բառը գոյություն ունի նաև Խրիմի թաթարերենում dangalax ձևով, որ նույն տեղի հայերն էլ փոխ են առել նրանցից և շարունակում են մինչև այժմ Նոր-Նախիջևանում Եղրսեցի, ոչ նախիջևանցի հայ իմաստով: Բառի բուն իմաստը անհայտ է իրենց մոտ, բայց պետք է, որ նախատական իմաստ ունի:

Կարծում եմ, թե այս բառը հայերեն է և ձևափոխված է տան գլուխ բառից: Այս բառը նշանակում է քմեծատան, գլխատան, իբրև թե ոտանավորի տան գլուխը գտնված տան: Այս բառը չկա Նոր Հայկազեան բառարանում, բայց գործածական է Պոլսի ժող. լեզվի մեջ վերի իմաստով:

Պետք է ասել, որ Պոլսի հասարակ ժողովրդի ավելի պարզացած մի տար ունի չմի քանի հայերեն բառեր, որոնք պրական չեն, բայց գուցե հայերեն են: Այս կարգի բառերից են՝ տաքտուն Երազանիք, եղինձ Եփրյավա և երսանկ Երազանիսի փայտյա կոշիկ, լալինա: Տան գլուխ բառն էլ սրանց կարգից է, որի հնագույն գործածությունը գտնում եմ Մխիթար Արքայի բառարանի Բ հատորի մեջ, էջ 14 (Մխիթար Արքան մեռել է 1749 թվականին, իսկ բառարանի Բ հատորը տպված է 1769 թ.):

Մեծ, խոշոր նշանակություն բառերը նաև Եկոպիտ, տգեղ իմաստն ունեն: Երբ խոշոր բառը նշանակում է Եկոպիտ, սրից էլ ունենք խոշորագեղ, խոշորածայն ևն: Անենոնի գրաբարում նշանակում է նախ քմեծ,

վիթխարի»։ Չօձ ցամաքային անճոռնի վիշապ անուանեն (եզն.)։ Ավելի ուշ ստացել է «տգեղ» նշանակութիւնը, որ այժմ սովորական է։ Եվ երբ Թովմա Արծրունին արարատյան բանակի զինվորներին կոչում է անճոռնի, գրանով չի ուզում ասել «տգեղ», այլ «բարձրահասակ, հողթանգամ»։ Այս կարգից է նաև անհերք, որի հին նշանակութիւնն է «մեծ, վիթխարի»։ Ազգ սկայից անհեղեղք. Սոր. ա 8, հետո ստացավ «տգեղ» նշանակութիւնը։

Այսպես է եղել նաև տան ուսւխ բառը։ «Մեծատառը կամ «գլխագիրը» իրրև խօշոր բան, արհամարհական իմաստ է ստացել. օր.՝ Տան գլուխ ես, ինչ է. իրր թե խոշոր, բայց անօգուտ մի բան ես։ Եվ այս նախատական իմաստով հայերենից անցել է թուրքերենին։ Բացի Պոլսից և Պրիմից, ուրիշ տեղ թուրքական բարբառներում գոյութիւն չունի այս բառը և թուրքական արմատներով էլ չի բացատրվում։ Նույնիսկ БУДАГОВ-ը, որ նշանակել է այս բառը, իրրև աղբյուր հիշում է միայն Հինգօղուի բառարանը և ոչ մի բարբառ չի հիշում։